24.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 24-ի N 2144 - Ն որոշման

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՆՈՐՄԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

1. Ներմուծող կազմակերպությունների կողմից կուտակվող դեղերը և բժշկական նշանակության գույքը կուտակման պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ, իսկ 1 տարվա պիտանիության ժամկետ ունեցող դեղերը՝ առնվազն 6 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ:

2. Ներմուծող կազմակերպությունների կողմից N 1 հավելվածով սահմանված նյութական արժեքները կուտակվում են՝

1) համաձայն «Նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ռազմավարական պաշարների կուտակման ժամանակացույցի՝

Նյութական արժեքների անվանումը	**«Նյութական պահուստի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ռազմավարական պաշարների կուտակման ժամանակացույց**	
	յուրաքանչյուր տարվա մայիս (քանակը)	**յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ (քանակը)**
N 1 հավելվածով սահմանված նյութական արժեքներ	50%	100%

2) առողջապահության ոլորտի լիազոր մարմնի կողմից սահմանված դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման նորմերին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ